ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 13 >> մայիսի 2013թ. N: 115-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի հունվարի 24-ի N 55-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի նոյեմբերի 24-ի ՀՆԱ-12 հանձնարարականի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրի» 1-ին կետի 4-րդ ենթակետի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքային զինվորական կոմիսարիատների կցագրման հանձնաժողովների անհատական կազմերում ընդգրկված ատամնաբույժներ Ա.Գասպարյանի (Գյումրու զինվորական կոմիսարիատ), Հ. Դարբինյանի (Արթիկի զինվորական կոմիսարիատ), Ա. Աբրահամյանի (Ախուրյանի զինվորական կոմիսարիատ), Գ. Սարգսյանի (Անիի զինվորական կոմիսարիատ) և Ա. Խաչատրյանի (Աշոցքի զինվորական կոմիսարիատ) փոխարեն համապատասխանաբար ընդգրկել սրտաբաններ Ռ. Անդրեասյանին, Մ. Յուզբաշյանին, Ռ. Գրիգորյանին, Ա. Խաչատրյանին և Ռ. Հովհաննիսյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զորակոչային տեղամասերին 1997 թվականին ծնված և ավագ տարիքի պատանիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին» թիվ 05-Ա որոշման հավելվածում «Ա.Գասպարյան-ատամնաբույժ», «Հ.Դարբինյան-ատամնաբույժ», «Ա.Աբրահամյան-ատամնաբույժ», Գ. Սարգսյան-ատամնաբույժ», «Ա. Խաչատրյան-ատամնաբույժ» բառերը փոխարինել համապատասխանաբար «Ռ.Անդրեասյան-սրտաբան», «Մ.Յուզբաշյան-սրտաբան», «Ռ.Գրիգորյան-սրտաբան», «Ա.Խաչատրյան-սրտաբան», «Ռ. Հովհաննիսյան-սրտաբան» բառերով:

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐՈՒ

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ